

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՈՒ.ՖՈԼԵՆԵՐԻ
«ԱՔԻՍՈՂՈՒՄ, ԱՔԻՍՈՂՈՒՄ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ֆոլքների երկերի թարգմանիչները հիմնալի գիտեն այն բազում դժվարությունները, որոնք առնչվում են նրա երկերում աչքի զարնող ոճական բազմազան միջոցների անկորուստ փոխանցմանը հայերեն լեզու, նաև այն դժվարությունները, որոնք առնչվում են նրա երկերում սփռված աշխարհագրական, բուսաբանական, կենդանաբանական, պատմա-քաղաքական, ռազմական, դիցաբանական իրակությունների, առանձնահատուկ տերմինների թարգմանությանը: Այս իմաստով բացառություն չէ նաև «Աքիսողո՞ւմ, Աքիսողո՞ւմ» վեպը¹, որն, ավելին, հենց յուրահատուկ է վերոնշյալ տեղեկատվության ամենախիտ ընդգրկումով:

Գեղարվեստական գրականության թարգմանության տեսության մեջ նշվում են մի շարք ուղիներ, որոնք կարելի է կիրառել այդ ամենը թարգմանելիս. հնչյունադարձման միջոցով թարգմանող լեզու փոխանցել տերմինը, որպես բառարանային հաստատուն ամրագրված համարժեք, ապա երևույթի խորքային – տեղեկատվական էությունը ներկայացնել կամ խոսքաշարային բացատրությամբ հենց խոսքային հիմնական հյուսվածքի մեջ, կամ նրանից զատելով փակագծերով, կամ էլ տողատակի /ծանոթագրություն/ հղումներով, որոնք ընթերցողի հարմարության համար երբեմն կարող են ներկայացվել գրքի վերջում /այստեղ երկու կարծիք կա. ոմանք գտնում են, որ տողատակի տեղեկությունները նույն էջի ներքևում ներկայացնելն առավել հարմար է, քանզի ընթերցողին առանձնապես չի շեղում խոսքաշարից, այլ գրեթե նույն տեղում հնարավոր է դարձնում երևույթի ամբողջական ընկալումն ու իմացությունը, ոմանք էլ այն կարծիքին են, թե էջը ծանոթագրություններով ծանրաբեռնելը յուրովի շեղում է ընթերցողի ուշադրությունը, ուստի հարկ է այն տեղադրել գրքի վերջում, որտեղ ճշմարիտ ընթերցողը չի զլանա ծանոթանալ գիտելիքի այս կամ այն ոլորտին առնչվող տեղեկություններին/: Մեր կարծիքով այս խնդիրը կարելի է

¹ Տե՛ս Ֆոլքներ Ու., «Աքիսողո՞ւմ, Աքիսողո՞ւմ», թարգմ.՝ Սամվել Մկրտչյան, եր., «Կան Արյան» հր., 2003, 395 էջ /այսուհետ՝ թարգմանական հատվածների մեջբերումներն այս գրքից/:

լուծել հետևյալ միջին տարբերակով. եթե գրքի վերջում ծանոթագրությունները հավաքելը նպատակահարմար չէ ընթերցողի՝ ոչ բարեխիղճ վերաբերմունքին արժանանալու վտանգը հաշվի առնելով, ապա կարելի է ծանոթագրել նույն էջի տողատակում, միայն թե հնարավորինս խուսափելով նույն էջում երկուսից ավել ծանոթագրություն տալով / հատկապես եթե յուրաքանչյուրը ծավալուն ընդգրկում ունի՝ երկու-երեք տող /, իսկ կուտակումների դեպքում մնացյալ տեղեկությունները ներկայացնել կամ նկարագրական մեթոդի կիրառությամբ, կամ փակագծերում՝ միջանկյալ խոսքի օգնությամբ: «Աբխտղո՛մ, Աբխտղո՛մի» թարգմանիչն այս խնդիրը լուծելու համար ընտրել է առանձնապես չժեծված մի տարբերակ, որն է. ծանոթագրությունները ներկայացվել են գրքի վերջում՝ այբբենական կարգով, սակայն մեր կարծիքով ընթերցողին որոշակիորեն կողմնորոշելու համար, որպեսզի նա զգոն լիներ տրվելիք տեղեկությունների գոյությանը թեկուզ գրքի վերջում, հարկ կար աստղանիշով կամ մեկ այլ նշանով ողջ տեքստի մեջ առանձնացնել այն իրողությունները, որոնց ծանոթագրություններն ընթերցողը կգտնի գրքի վերջին էջերում: Բացի այդ, հետաքրքիր է, որ թարգմանիչն ընտրել է նաև ողջ խոսքաշարի ընթացքում մի շարք ծանոթագրություններ ներկայացնելու ձևը կրկնակի աստղանիշերով և միջանկյալ փակագծերով, որոնք գրքի վերջում գետեղված ծանոթագրություններից տարբերվում են իրենց տեղեկատվական բնույթով. գրքի վերջում տեղեկություններն առնչվում են հատուկ անուններին և պատմա-աշխարհագրական իրականություններին, դիցաբանական և աստվածաշնչյան վկայությունների մեկնությամբ, մինչդեռ ընդհանուր խոսքաշարում երևացող ծանոթագրություններն առավել համընդհանուր բնույթի տեղեկություններն են, որոնք առնչվում են կամ սոսկ բառի /բառակապակցության/ բացատրությունը, կամ որոշ հապավումների բառաբացմանը, կամ օտարալեզու, խորհրդանշական իմաստներով կիրառվող բառային միավորների թարգմանությանը, որոնք նպաստում են խորհրդանշիչ ընկալմանը: Մի քանի օրինակներով լուսաբանենք վերն ասվածը:

Դարկ է նշել, որ գրքի /թարգմանության/ վերջում ներկայացված արժեքավոր ծանոթագրությունների շարքում շատ գնահատելի է հատկապես գրքի վերնագրի՝ «Աբխտղո՛մ, Աբխտղո՛մի» խորհրդանշական, թող որ երգիծող զուգահեռը գրքի գլխավոր հերոսներից մեկի՝ Թոմաս Սաթիենի կերպարի հետ, որը հատկապես գնահատելի է այն տեսակետից, որ թարգմանչի ընկալման և մեկնաբանության արդյունքն է.

«Աբխտղոմ - Դին կտակարանում Դավիթ թագավորի որդին, որն սպանում է իր եղբորը՝ Ամոնին, քանզի վերջինս բռնաբարել էր իր քրոջը

Թամարին (Ս ԹԱԳԱՒՈՐԱՅ, ԺԳ): ...Ֆուլքներն, ինչպես միշտ, «խաղում է» աղբյուրների հետ. Սաթփենի և Ղափիթ թագավորի համեմատությունը հեզնական է» /էջ 390/ :

Հետաքրքիր և ուսանելի մեկնաբանություն է տրված «Գեթսեմանի» բառին՝ իբրև աստվածաշնչյան վկայության մեկնություն. «Գեթսեմանի - դատելով «փշոտ» մակդիրից՝ Ֆուլքներն այստեղ նկատի ունի ոչ միայն Գեթսեմանի պարտեզը, որտեղ Քրիստոսն ասաց բաժակի աղոթքը (*«Իմ Հայր, եթե կարելի է՝ թող այս բաժակն ինձնից անցնի. սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու»*) (ՄԱՏԹԵՈՍ, ԻԶ, 39), այլև՝ Գողգոթան» /էջ 391/ : շեղատառերով ընդգծումը հեղինակի - Ու. Ֆուլքների/ :

Քանի որ ողջ պատումի ընթացքում Սաթփենի անունը հիշատակելու փոխարեն բազմաթիվ անգամներ վկայակոչվում է «դեռ», մեր կարծիքով անհրաժեշտ և արժեքավոր ծանոթագրություն է հունական դիցաբանության մեջ գտնել «Դևի ատամների» մեկնությունը.

«Դևի ատամներ - հունական դիցաբանում՝ Յանտոնը, ոսկեզեղմը ստանալու համար հերկում է հողը ի պատիվ պատերազմի աստված Արեսի և վիշապի ատամներ ցանում, բայց այդ ատամներից վայրկենապես ռազմիկներ են աճում և հարձակվում Յանտոնի վրա» /էջ 392/ :

Հատուկ անունների մեկնության օրինակները շատ են, սակայն արժանա-հիշատակ օրինակներ են հետևյալ ծանոթագրությունները. «Շերման, Վիլյամ (1820-1891) - ամերիկացի նշանավոր զորավար, որի բանակը վերջնական հաղթանակ բերեց հյուսիսցիներին», «Ջեքսոն, Թոմաս Ջոնաթան (1824-1863) - Համադաշնակցության ամենաշնորհալի զորավարը, որը ոչ մի ճակատամարտ տաճուկ չտվեց» /էջ 393/ : Հարկ է նշել, որ վերոհիշյալ հատուկ անունների բացատրությունը, որքան արժեքավոր է ոչ միայն «Աբիսողոմ, Աբիսողոմի», այլև Ֆուլքների ողջ ստեղծագործության մեջ ընթացող պատմական իրադարձությունների լավագույնս ընկալման տեսակետից, նույնքան էլ, մեր կարծիքով, անտեղի են այնպիսի անունների ծանոթագրումը, ինչպիսիք են «Սքոթ, Վալտեր - անգլիացի գրող», «Ուայլդ, Օսկար - (1854 - 1900) անգլիացի գրող, բանաստեղծ և թատերագիր» /էջ 394/, «Լիմբուլն Աբրահամ (1809-1865) - ԱՄՆ-ի նախագահ» /էջ 392/, որոնց, ըստ «մեզ» Ֆուլքների երկերը ձեռքը վերցնող ընթերցողը, ինքնին ենթադրելի է, գոնե գրականության և պատմության որոշակի իմացություն ունենալով, պետք է անպայման իրազեկ լինի :

Պատմա-աշխարհագրական տեղեկատվության հիմնալի օրինակներ են. «Մեյսընի և Դիքսընի գիծ - ԱՄՆ-ում Հարավի և Հյուսիսի սահմանագիծը

(Փենսիլվանիա և Մերիլենդ նահանգների միջև)», «Չիքանոգա - Թենեսի գետի վտակը, որի մերձակայքում Համադաշնակցականները 1863-ի սեպտեմբերի 20-ին մեծ կորուստների գնով հաղթանակ տարան» /էջ393/ :

Ահա և ծանոթագրությունների մի քանի օրինակներ, որոնք հանդիպում են գրքի ընդհանուր խոսքաշարում. «... (what is it? The words? White what? – Yes, trash)»² /p. 180/ , թարգմանված է և ծանոթագրված. «...ինչպե՞ս էր, բառը, սպիտակ ի՞նչ – հա, սպիտակ լպուստով* (*չքավոր սպիտակամորթներ, որոնց սևամորթներից չէին տարբերում)» /էջ 188/: Անգլերեն «trash» բառը, որի բառարանային համարժեքներն են «մնացուկներ, տականքներ, թափուկներ», «white trash» բառակապակցության մեջ ստանում է շատ որոշակի երանգավորում և որպես ամերիկյան միջավայրի իրակություն, նշանակում է «Հարավային նահանգների սպիտակամորթ չքավորներ»: Թարգմանիչը գործածել է հայերեն «լպուստ» բառը, որը լեզվի խոսակցական – ժարգոնային շերտին է պատկանում՝ նշանակելով «թափթուկ», բայց ըստ վեպի տվյալ հատվածի իրադրության, թարգմանիչը հարկ է համարել այն բացատրել փակագծային ծանոթագրությամբ (*չքավոր սպիտակամորթներ, որոնց սևամորթներից չէին տարբերում):

«C.S.A.» /p. 187/ հապավումը, որն իրավացիորեն թարգմանված է հապավումով՝ «Ա.Ն.Հ.», անշուշտ, հարկ կար բառաբացել, որը և խոսքաշարի մեջ ճշգրտորեն կատարել է թարգմանիչը՝ փակագծերում բացատրելով. «(Ա.Ն.Հ.–Ամերիկյան Նահանգների Համադաշնակցություն)/էջ 196/:

«And he not telling that either, how that day happened, the steps leading up to it because Grandfather said he apparently did not know, comprehend, what he must have been seeing every day because of that innocence a pig's bone with a little rotten flesh still clinging to it, a few chicken feathers, a stained dirty rag with a few pebbles tied up in it found on the old man's pillow one morning...» /p. 240-241/ հմմտ. «Նա այդ էլ չէր պատմում – ինչպե՞ս եկավ և ի՞նչ քայլեր տարան դեպի այդ օրը, որովհետև պապն ասաց՝ նա չգիտեր, չէր հասկանում. ոգու անմեղությունը թույլ չէր տալիս տեսնելու փտած մսով խոզի ոսկորը, հավի փետուրները, կեղտոտ փալասով փաթաթված խճաքարերը* (*Նախագգուշական նշաններ, որոնցով սևամորթները թշնա-

² Faulkner W., Absalom, Absalom!, A novel, Russia, Progress Publishers, Moscow, 1982, 416p.

/Այսուհետ քննադրային բոլոր մեջբերումներն այս գրքից, ընդգծումներն իմն են - Ղ.Հ./:

մուն զգուշացնում էին զալիք հարծակման մասին:), որոնք մի առավոտ գտան ծերունու բարձի վրա...» /էջ 258/ :

Խոսքաշարում տրված վերոբերյալ բացատրությունը խիստ անհրաժեշտ է հատվածի ասելիքն ընկալելու տեսակետից, քանի որ նախազգուշական նշաններ հանդիսացող «փտած մտով խոզի ոսկորը, հավի փետուրները, կեղտոտ փալասով փաթաթված խճաքարերը» կարող էին սոսկ թվարկված անիմաստ իրեր թվալ, եթե չլինեին հավելյալ տեղեկությունն այն մասին, որ դրանցով սևամորթները թշնամուն զգուշացնում էին զալիք հարծակման մասին:

«'Yes', Quentin said. 'Father said he probably named him himself. Charles Bon. Charles Good...' » /p. 252/

հմմտ. «- Այո, - ասաց Քվենթինը: - Հայրիկն ասաց՝ ամենայն հավանականությամբ Սաթփենն էր նրան անվանակոչել Չարլզ Բոն: Չարլզ Բարի» (*Bon (- Ֆր.) լավ, բարի) /էջ 271/:

Այստեղ ծանոթագրված ֆրանսերեն «Bon» բառի թարգմանություն-բացատրությունն էական էր հենց խոսքաշարում, քանզի Չարլզին՝ առաջին կնոջից ունեցած իր /խառնածին/ որդուն, Սաթփենը պատահաբար չէ անվանել այդպիսի օտարածին բառ-անունով /նրա կինը նույնպես խառնածին էր, ֆրանսիական ծագումով, ծնված Հաիթիում, որի արյան մեջ ներկա էր նաև սևամորթի արյան ինչ-որ տոկոս/, սակայն որդին «լավ ու բարի» լինելով հանդերձ, հանդուրժելի ու հարազատ չեղավ այնքան /և չէր կարող լինել/, որին մոր հետ չլքեր սպիտակամորթ Թոմաս Սաթփենը:

Ֆոլքների բառարվեստի առանձնահատկություններից են թե՛ նորաբանությունների /neologism/, հնաբանությունների /archaism/՝ նորովի կիրառումը, ուղղակիորեն «նոր» բառերի ստեղծումը, թե՛ բազմաթիվ իրականությունների գործածությունը, որոնց թարգմանությունը ցանկացած թարգմանից պահանջում է թե՛ ստեղծագործական հզոր աշխատանք, գիտելիքի մեծ պաշար և լայն մտահորիզոն, թե՛ տքնաջան աշխատասիրություն, երբեմն՝ սիզիփոսյան համառություն:

Հիանալի և շատ պատկերավոր է նկարագրել թարգմանչի աշխատանքի ընթացքն ու արդյունքը հայ մեծանուն թարգմանիչ Խաչիկ Դաշտենցը՝ ներկայացնելով իր իսկ ուսանելի փորձը՝ կապված շեքսպիրյան թարգմանությունների հետ. «Իմ թարգմանական սկզբունքն այս է. առանձին անհաջող նախադասությունները չեն, որ որոշում են թարգմանության որակը:

Թարգմանության մեջ կարևորը շունչն է, այն ավյունը, որով թարգմանվում է տվյալ գրվածքը:

Ամենալավն այն է, եթե մենք թարգմանված երկը համեմատենք անտառի հետ: Ինչպես որ փոթորկից տապալված մի քանի ծառ չեն կարող ազդել անտառի գեղեցկության վրա, թեև տեղ-տեղ կարող են դժվարացնել անցումը, այնպես էլ գրքում տապալված մի քանի նախադասությունը չեն կարող նսեմացնել լավ թարգմանության հմայքը, թեև ընթերցողը կարող է սայթաքել դրանց դիպչելիս»:³

Այո՛, և «տապալված ծառերի» անխուսափելի գոյությունը նույնիսկ ամենահմուտ և տաղանդաշատ թարգմանչի կատարած թարգմանության մեջ ևս մեկ անգամ վկայում և հաստատում է, թե որքան բարդ ու պատասխանատու աշխատանք է հատկապես գեղարվեստական գրականության թարգմանությունը, երբ մերծենում են մշակույթներն ու քաղաքակրթությունները, մարդկության պատմության հեռու և մոտ ժամանակահատվածները, մարդիկ, ժողովուրդները, ազգերն ու պետությունները: Վատ թարգմանությունը՝ տապալված ծառերով խցանված «անանցանելի անտառը», կփակի բոլոր ճանապարհները, կմեկուսացնի և կօտարացնի մարդուն /տվյալ դեպքում՝ գրողին/, նրա ներկայացրած մշակույթն ու քաղաքակրթությունը: Իսկ թարգմանությունների գործնական և տեսական ուսումնասիրությունն ու զնահատությունը գալիս է օգնելու խուսափել նույնիսկ հատուկեմտ ծառերի տապալումից:

³Դաշտենց Խաչիկ, «Իմ աշխատանքը շեքսպիրյան թարգմանությունների վրա», «Շեքսպիրական», հ. 1, խմբ.՝ Ռուբեն Զարյան, ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1966թ., 162-168 էջ, էջ 163: